

Ա. Կիրակի, -ԽԱՉՎԵՐԱՅ-

Նիւթ՝ Քրիստոսի Ս. Խաչը

Աւետարանի Հատուած (Յովհ.3:13-21):

• Տէրունական աղօթք «Հայր Մեր» եւ «Զգործս ձեռաց մերոց ուղի՛ղ արա ի մեզ Տէր եւ ըզգործս մտաց մերոց յաջողեա՛ մեզ Տէր. ամէն»:

• Սաղմոսի ուսուցում [10 վայրկեան]
ԸՆԹԵՐՅՈՒՄ ՍԱՂՄՈՄԵՆԵՐՈՒ ԳԻՐՔԻՆ
ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ
(Ա. Տարբերակ)

- Նեղութեանս պահերուն Տիրոջ դիմեցի, ու Ան պատասխան տուաւ ինձի (120:1):

= Ով Տէր, փրկէ զիս ստախօսներէ, ու չարախօս լեզուներէ (120:2):

- Անոնք որոնք Աստուծոյ վրայ կը դնեն իրենց յոյսը՝ լեռի նման հաստատուն կը մնան (125:1):

= Ով Տէր, բարիք ըրէ ուղղամիտ եւ սրտով բարի մարդոց (125:4):

- Որքա՛ն լաւ պիտի ըլլար, որ մարդիկ իրարու հետ սիրով ապրէին (133:1):

= Ով Տէր, զիս չար մարդէն փրկէ, ու բռնաւոր մարդէն զիս պահէ (140:1):

- Անոնք սրտերնուն մէջ չարիք կը ծնին, ու ամէն օր կռիւ ընելու համար կը հաւաքուին (140:2):

= Ով Տէր, չարերուն սրտին փափաքը մի՛ կատարեր, անոնց չար ծրագիրները մի՛ յաջողցնէր (140:8):

- Մարդկային ոյժերու վրայ յոյս մի՛ դնէք: Մարդուն հոգին դուրս կու գայ, ու մարմինը հողին կը դառնայ (146:3-4):

= Երանի այն մարդուն, որ չարերուն ունեցած մտածումներուն հետ չի համաձայնիր, ու մեղաւորներուն կեանքին չի համակերպիր եւ ծաղրողներուն աթուղին վրայ չի նստիր (1:1):

- Ով Տէր, քեզի կը յուսամ, փրկէ զիս բոլոր իմ հալածիչներէս (7:1):

= Գոհութիւն պիտի մատուցանեմ Աստուծոյ իմ բոլոր սրտովս եւ Անոր կատարած սքանչելիքները պիտի պատմեմ (9:1):

• Սաղթանք/աղօթքի ուսուցում [10 վայրկեան]

1. Sunday, -Exaltation of the Holy Cross

Theme: The Holy Cross of Christ

Gospel Reading (John 3:13-21).

• Lord’s Prayer and Prayer on beginning work; “Lord, may Your loving favor rest upon us, and prosper all the work we undertake. Glory be to the Father, and to the Son, and to the Holy Ghost, now and forever. Amen.

• Reading/teaching of Psalms [10 minutes] Psalm 1

- Blessed is the man who walks not in the counsel of the ungodly, nor stands in the path of sinners, nor sits in the seat of the scornful;

= But his delight is in the law of the Lord, and on His law he meditates day and night.

- He shall be like a tree planted by the rivers of water, that brings forth its fruit in its season, whose leaf also shall not wither; and whatever he does shall prosper.

= The wicked are not so, but are like the chaff which the wind drives away.

- Therefore the wicked will not stand in the judgment, nor sinners in the congregation of the righteous.

= For the Lord knows the way of the righteous, but the way of the wicked will perish.

• Teaching of Prayer/ biblical verses [10 minutes]

- Before your precious and all-conquering Cross we fall down and worship and ask forgiveness of our transgressions for through this you did lift the condemnation of mankind. And now by your holy and divine sign grant your heavenly peace to all the world.

- Oh Christ, our God, guardian and hope of the faithful, protect and keep in peace Your faithful people under the protection of Your holy and venerable Cross.

- Deliver and save Your people from visible and invisible enemies. Make them worthy to thankfully glorify You with the Father and the Holy Spirit, now and always, and forever and ever, amen.

«Խաչ քո եղիցի մեզ ապաւէն»

**Մաղթանք/Աղօթք
ԽԱՉ ՔՈ ԵՂԻՑԻ**

Քու խաչը մեզի ապաւէն՝ ըլլայ, Տէ՛ր Յիսուս, երբ երեւիս հօրը փառքով՝ լուսաւոր ամպերու մէջ. այն ատեն չամչնա՛նք մենք՝ Քեզի յուսացողներս, այլ քու մեծ գօրութեամբդ բերկրինք քու աջ կողմդ, իբրեւ լոյսի որդիներ եւ փրկուածներ:

**Մաղթանք/Աղօթք
ՊԱՀՊԱՆԵԱ՝ ԶՄԵԶ**

Պահպանէ՛ մեզ, Քրիստոս Աստուած մեր, սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին տակ, խաղաղութեան մէջ. փրկէ՛ տեսանելի եւ անտեսանելի թշնամիէն. արժանի՛ ըրէ գոհութեամբ փառաւորելու Քեզ, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

- Շարականի ուսուցում [10 վայրկեան] «Զօրութիւն Ս. Խաչի քո Քրիստոս»

ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Խաչվերացի Բ. Օրուան

Զօրութիւն սուրբ խաչի քո, Քրիստոս, որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի. սա պահեսցէ ըզմեզ յամենայն փորձութենէ:

Քանզի ի սմա բարձրացար, Աստուած, եւ ի սմա հեղեր ըզպատուական սուրբ գարիւնդ. սա պահեսցէ ըզմեզ յամենայն փորձութենէ:

Եւ ըզքո միւսանգամ ըզգալուստրդ նշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի. սա պահեսցէ ըզմեզ յամենայն փորձութենէ:

- Ճաշու Աւետարանի ընթերցումէն առաջ երգել Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ Որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ: «Խաչի տօներուն»

- Նախընտրաբար ըստ Տօնացոյցի Կիրակի օրուան Ճաշու Աւետարանի ընթերցումը կատարել եւ համապատասխան բացատրութիւններ տալ: [15 վայրկեան]

- By the Holy Cross let us beseech the Lord, that He may deliver us from sins and may save us by the grace of His mercy. Amen.

- Teaching of ‘sharagan’ or Spiritual hymns. [10 minutes]

Before the Gospel reading students must sing Trisagion “soorp Asdvadz” Holy God, Holy and Mighty, Holy and immortal, who was crucified for us, have mercy upon us.

Variables of Trisagion

For Theophany and Transfiguration: “Who was revealed for us, have mercy upon us”.

For Purification, Pentecost and Assumption: “Who did come and are to come, have mercy upon us”.

For Feasts of the Cross, of the Church, saints and Fasting days: “Who was crucified for us, have mercy upon us”.

- It is preferred to read the Gospel of the day. The teacher should explain/ comment what was read [15 minutes].

On this Sunday it is appropriate to present the historical background of the feast of the Exaltation of the Holy Cross [5 minutes].

- Announcements/ recommendations/ suggestions
- Collection
- Sunday School’s anthem
- Students depart to their classes.

It is suggested that on this Sunday students should learn how to make the sign of the cross; work in class to draw and prepare crosses to take home.

It is highly recommended that on this Sunday, students and teachers make an special effort to participate the Divine Liturgy and take Holy Communion.

- Անդրադառնալ կրօնական-ազգային սօներուն [5 վայրկեան]
- Այս Կիրակի խօսիլ «Խաչվերաց» սօնին մասին:
- Թելադրութիւններ եւ ծանուցում-յայտարարութիւններ [5 վայրկեան]
- Կամաւոր նուէրներու հաւաք
- Կիրակնօրեայի քայլերգ
- Դասարանային Աշխատանք
- Փակման Աղօթք

ՓԱԿՄԱՆ ԱՂՕԹՔ

Թագաւոր երկնաւոր, զՆկեղեցի քո անշարժ պահեա. եւ զերկրպագուս անուանդ քում պահեա՛, ի խաղաղութեան:

ԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թելադրելի է որ աշակերտներ սորվին խաչակնքել, խաչի զծանկարը պատրաստեն, ներկեն եւ տուն տանին:


Թելադրելի է նաեւ որ աշակերտներ իրենց ուսուցիչներուն հետ Ս. եւ անմահ Պատարագի մասնակցին այս Կիրակի եւ ստանան Ս. Հաղորդութիւն:



CLOSING PRAYER

Heavenly King preserve your Church unshaken and those who worship in Your name, name, keep them in peace.

Takavor yernavor zegheghet'si ko ansharj bahya, yev zeregurbaqoos anvanut koom bahya ee khaghaghootyan.



ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ս. ԽԱՉԻ

Քու խաչիդ, Քրիստոս, կ'երկրպագենք, եւ քու սուրբ թաղումդ կը բարեբանենք, եւ քու սուրբ յարութիւնդ կը փառաւորենք. եկէ՛ք ո՛վ հաւատացեալներ, երկրպագենք Քրիստոսի՛ մեր Աստուծոյն, որովհետեւ եկաւ եւ իր խաչին միջոցաւ աշխարհին պարգեւներ շնորհեց:

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ, դուն որ մեռելներէն յարութիւն առիր, ողորմէ՛ մեզի:

ԽԱՉՎԵՐԱՑ

Խաչվերացը Խաչի տօներէն ամենէն հինն է, որուն պատմական սկզբնաւորութիւնը Երուսաղէմի քրիստոնէայ առաջին համայնքին հետ կը կապուի: Որովհետեւ քրիստոնէաներու համար Խաչը մահուան եւ պատիժի անարգ գործիք մը ըլլալէ այլեւս դադրած՝ դարձած էր փրկագործութեան խորհրդանիշ:



Նոյն ժամանակահատվածում, ինչպէս որ խաչը մահուան եւ պատիժի անարգ գործիք մը ըլլալէ այլեւս դադրած՝ դարձած էր փրկագործութեան խորհրդանիշ:

Հայ եկեղեցին խաչին նուիրուած չորս տօներ ունի.

- ա.- Խաչվերաց կամ Վերացման Ս. Խաչի
- բ.- Գիւտ Ս. Խաչի
- գ.- Երեւման Ս. Խաչի
- դ.- Վարագայ Ս. Խաչի:

Խաչվերացի տօնը խաչի տօներէն ամենէն ճոխն է, եւ վերջինը Հայ Եկեղեցւոյ հինգ Տաղաւարներէն: Տօնը կը յատկանշուի մեծահանդէս թափօրով, խաչին վերացմամբ եւ Անդաստանի օրհնութեամբ:

Խաչվերացի տօնին կապուած են պատմական քանի մը յիշատակութիւններ:

1.— Խաչվերաց կը նշանակէ խաչին վեր բարձրացումը, պանծացումը եւ փառաւորելու արարքը, որ ըստ աւանդութեան Երուսաղէմի առաջին եպիսկոպոս, եւ Յովհաննէս առաքեալի եղբայրը՝ Յակոբոս Զբեթեան, հաւատացեալ բազմութեան ներկայութեան Խաչը առաջին անգամ ըլլալով հանդիսաւորապէս բարձրացուցած է եւ անով օրնած է ժողովուրդը: Այդ առթիւ Յակոբոս «Խաչի քո, Քրիստոս, երկիր պագանեմք» օրհնութիւնն ու փառաբանանքի աղօթքը արտասանած է:

2.— Խաչվերացի տօնին նաեւ կցուած կը գտնենք Պարսկաստանէն Խաչին գերեզարծի պատմական պարագաները:

601 թուին, Երուսաղէմը Պարսից կողմէ կը գրաւուի: Նուիրական այլ առարկաներու հետ, Քրիստոսի խաչափայտն ալ որպէս աւար՝

THE HOLY CROSS OF JESUS CHRIST Feast of Exaltation of the H. Cross

Whenever you see a cross, the first thing which comes to mind is our Lord Jesus Christ and Christianity. It is the only truly universal symbol of Christianity.



Our Lord says: “He who does not take his cross and follow me is not worthy of me” (Matt.10:38). The cross is central to Christianity, it identifies us as Christians. The cross is the means of our salvation and the glory of Christians.

Our Armenian Church has four feasts days in honor of the Holy Cross.

- 1) The Appearance of the Holy Cross,
- 2) the Elevation of the Holy Cross,
- 3) the Holy Cross of Varak, and
- 4) the Discovery of the Holy Cross.

Today, as we celebrate and commemorate the Elevation or Exaltation of the Holy Cross, which is at the same time one of the five major feasts (Daghavar), of the Armenian Church, has special meaning and a close relationship to the life and the saving work of our Lord, Jesus Christ. For the Cross which we venerate as Christians, is an instrument of salvation, sign of victory, hope and life eternal.

The historical background of this feast is as follows: In 610 A. D. the Persian king Khosrov occupied Jerusalem. He captured and took with him the Cross as well as other relics and religious ornaments to Persia. After almost two decades of captivity of the Holy Cross, the Byzantine Emperor Heraclitus called the help of the entire Christians in his empire to recapture the Holy Cross from the Persians. The Byzantine Emperor in 628 A. D. conquered Persia and returned the Cross to Jerusalem. On the journey from Persia to Jerusalem, the cross was brought to the city of Garin in Armenia. The joy of the entire Christendom was overwhelming. The Holy Cross was brought back

Պարսկաստան կը գերուի: Այս դէպքէն գրեթէ 18 տարիներ ետք, Յունաց Հերակլ կայսրը 628/9-ին Պարսից յաղթելով՝ Քրիստոսի խաչափայտը կ'ազատագրէ եւ զայն փառաշուք եւ մեծահանդէս տօնախմբութեամբ Երուսաղէմ կը վերադարձնէ եւ խաչը կը գետեղէ Ս. Յարութեան Տաճարին մէջ:

Խաչվերացի տօնը մեր եկեղեցւոյ կողմէ ծաղիկներով եւ ունանով, թափօրանդաստանով եւ մեծ հանդիսութեամբ կը տօնախմբուի:

3.— Քրիստոսի խաչափայտը փրկագործութեան խորհրդանիշ է: Քրիստոնէութենէ շատ առաջ կար խաչը եւ յոյներ յատկապէս, զայն կը գործածէին որպէս մահուան գործիք ոճրագործներն ու մահապարտները պատժելու: Քրիստոսով ան դարձաւ յաղթութեան, կեանքի եւ փրկագործութեան նշան: Խաչը, կը յիշեցնէ Գող-գոթան՝ ուր Քրիստոսի թափած աստուածային արիւնը որպէս փրկագին՝ կ'երաշխաւորէ մեղապարտներու փրկութիւնը:

Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան



upon the shoulders of the Christian officers passing through Armenia. Throughout the entire journey the Holy Cross was greeted and venerated everywhere by pious Christian population of Armenia and Asia Minor. Then the Cross was taken to Jerusalem to be instituted in the Cathedral of the Holy Sepulcher.

This event is celebrated by our church with a special service. A veiled cross, ornamented by flowers and basil, is circulated in the church by priests, deacons, acolytes along with the choir forming a procession. Then stopping at the middle of the church the priest (s) will bless the four corners of the world asking God's blessings and bounties for the prosperity of the Armenian Church and country, to the Christian nations, fruitfulness of the land and all the holy places with their inhabitants.

By its elevation and veneration, the Christians witness the saving and healing power of the Cross. “ And as Moses lifted up the serpent in the wilderness, even so must the Son of Man (Jesus) be lifted up. And whosoever believes in him should not perish, but have eternal life” (John 3:14 -15).

One of the beautiful melodies for the feast of the Elevation of the Holy Cross proclaims:

*The sign of the Lord our God
Shown forth at the great day
Which was in Jerusalem.*

Still another processional hymn announces:

*You who spread Your pure arms upon
The cross, Christ our God,
And gave us a sign of victory,
Through it keep our lives.*



Բ. Կիրակի

Նիւթ՝ Յիսուս Մանուկներու Բարեկամ
Աւետարանի Հատուած (Մատթ.19:14):

• **Տէրունական աղօթք «Հայր Մեր» եւ**
«Զգործս ձեռաց մերոց ուղի՛ղ արա ի մեզ **Տէր եւ**
ըզգործս մտաց մերոց յաջողեա՛ մեզ Տէր. ամէն»:
Կամ՝

«Տէ՛ր, եթէ իմ շրթունքներս բանաս՝ իմ բերանս
քու օրհնութիւնդ պիտի երգէ:

Օրհնեա՛լ ըլլայ համագոյ եւ միասնական,
անբաժանելի **Ս. Երրորդութիւնը՝ Հայրը, Որդին**
եւ Սուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից: Ամէն»:

• **Սաղմոսի ուսուցում [10 վայրկեան]**
Ընթերցում
ՍԱՂՄՈՄՆԵՐՈՒ ԳԻՐՔԻՆ
ՀՏԵՏԻՈՂՈՒԹԵԱՄԲ
Սաղմոս 18:8-11

- **Տիրոջ Օրէնքը կատարեալ է, մարդս կը**
վերանորոգէ. Տիրոջ պատուէրը վստահելի է,
իմաստուն կը դարձնէ մանուկները:

= **Տիրոջ կանոնները ուղիղ են, սիրտը**
կ'ուրախացնեն. Տիրոջ պատուիրանները լոյս են,
աչքերը կը լուսաւորեն:

- **Տիրոջ վախը սուրբ է, եւ յաւէտ անջնջելի.**
Տիրոջ վճիռները ճշմարիտ են եւ միշտ արդար
են:

= **Աւելի ցանկալի՝ քան ոսկին կամ թանկագին**
քարերը, աւելի քաղցր՝ քան մեղրը եւ կամ
մեղրախորիսխը:

- **Ես, քու ծառայ, կը պահեմ կանոններդ,**
որովհետեւ անոնք լիովին կը վարձատրեն
պահողը:

• **Սաղթանք/աղօթք/ ոսկեղէն համարի ու-**
սուցում [10 վայրկեան]

Ո՛վ Մեծ Աստուած
Ո՛վ մեծ Աստուած,
Մեզ տուած ես բարի հայր,
եւ գուրգուրացող մայր:
Տո՛ւր մեզ շնորհք ընենք աղօթք,
Զըլլանք անհոգ, ապրինք խելօք,
Պարկեչտ ու հեզ ու սիրենք քեզ:

2.- Sunday

Theme: Jesus Loves Children
(Matt. 19:14).

• **Lord’s Prayer and Prayer on beginning work;** “Lord, may Your loving favor rest upon us, and prosper all the work we undertake. Glory be to the Father, and to the Son, and to the Holy Ghost, now and forever. Amen.” **Or**

“Let the words of my mouth and the meditation of my heart be always acceptable in Your sight, O Lord, my strength and my redeemer. Glory be to the Father, and to the Son, and to the Holy Spirit, now and always, world without end. Amen.”

• **Reading/teaching of Psalms [10 minutes]**
Psalm 18:8-11

- The law of the Lord is perfect, converting the soul; The testimony of the Lord is is sure, making wise the simple;

= The statutes of the Lord is pure, enlightening the eyes;

- The fear of the Lord is clean, enduring forever; The judgments of the Lord are true and righteous altogether.

= More to be desired are they than gold, sweeter than honey and the honeycomb.

- Moreover by them Your servant is warned, and in keeping them there is great reward.

• **Teaching of Prayer/ biblical verses**
[10 minutes]

O`h God Almighty

Oh! God Almighty,
Just as You have given
Us a good father
And a loving mother,
Give us Your grace, so we may pray.
Not to be indifferent, but to live intelligently,
Honorably and mildly, and love You.

Biblical Verses

- «Պատուէ՛ հայրդ ու մայրդ, որպէսզի երկար օրեր ունենաս» (Ելք 20:12):
- «Տիրոջ համար՝ հնազանդութիւնը գոհէն եւ խօսք մտիկ ընելը խոյերու ճարպէն շատ աւելի լաւ է» (Ա. Թագ. 15:22):
- «Իմաստուն տղան իր հայրը կ'ուրախացնէ» (Առակաց 10:1):
- «Որդիներուն պարծանքը իրենց հայրերն են» (Առակաց 17:6):
- «Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի՝ նո՛յնը ըրէք դուք անոնց» (Մատթ. 7:12):
- «Ով որ Աստուծոյ արքայութիւնը չ'ընդունիր փոքրիկի մը պէս, հոն պիտի չմտնէ» (Մարկ. 10:15):
- «Ինչո՞ւ եղբօրդ աչքին մէջ գտնուող շիւղը կը տեսնես, բայց քու աչքիդ գերանը չես նշմարեր» (Ղուկ. 6:41):
- «Երանի՛ անոնց, որոնք Աստուծոյ Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն զայն» (Ղուկ. 11:28):
- «Ով որ կը սիրէ զիս՝ խօսքերս կը գործադրէ» (Յովհաննէս 14:23):
- «Աստուծոյ նմանեցէք, որպէս իր սիրելի որդիները (Եփեսացիս 5:1):
- «Լոյսի որդիներուն վայել ձեռով ապրեցէք» (Եփեսացիս 5:8):
- «Զաւակներ, իբրեւ Տիրոջ հետեւորդներ՝ ձեր պարտականութիւնն է հնազանդիլ ձեր ծնողներուն, որովհետեւ ա՛յլ է շիտակը: Հայրե՛ր, մի՛ զայրացնէք ձեր զաւակները, այլ զանոնք մեծցուցէք քրիստոնէական դաստիարակութեամբ եւ կրթութեամբ» (Եփեսացիս 6:1,4):

• Շարականի ուսուցում [10 վայրկեան]
 Աշակերտք Քրիստոսի, եւ առ ա՛մենա՛յն տիեզե՛րս առաքեա՛լք. բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն մե՛ր:

Որք առի՛ք ըզպատուէ՛ր քարոզել աներկիւղ ըզբանն կենա՛ց աշխարհի՛. բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն մե՛ր:

Որք արժանի՛ եղէ՛ք տեսանել մարմնով զՈրդին Աստուծո՛յ յայտնապէ՛ս. բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն մե՛ր:

- “Honor your father and your mother, so that your days may be long” (Ex. 20:12).
- “To obey is better than sacrifice, and to heed than the fat of rams” (I Kings 15:22).
- “A wise child makes a glad father, but a foolish child is a mother’s grief” (Prov.10:1).
- “The glory of children is their parents” (Prov.17:6).
- “Whatever you want men to do you, do also to them” (Matt. 7:12).
- “Let the little children come to Me, and do not forbid them, for of such is the kingdom of God. Whoever does not receive the kingdom of God as a little child will by no means enter it” (Mark 10:15).
- “Why do you look at the speck in your brother’s eye, but do not perceive the plank in your own eye?” (Luke 6:41).
- “Blessed are those who hear the word of God and keep it” (Luke 11:28).
- “If anyone loves Me, he will keep My word” (John 14:23).
- “Be imitators of God as dear children” (Eph.5:1).
- “Walk as children of light” (Eph. 5:8).
- “Children, obey your parents in the Lord, for this is right. Fathers, do not provoke your children to wrath, but bring them up in the training and admonition of the Lord” (Eph.6:1,4).

• Teaching of ‘Sharagan’ or Spiritual hymns. [10 minutes]

Before the Gospel reading students must sing

• Trisagion “soorp Asdvadz”
 Holy God, Holy and Mighty, Holy and immortal, who did rise from the dead, have mercy upon us. (For Resurrection Sundays)

Variables of Trisagion
 For Theophany and Transfiguration: “Who was revealed for us, have mercy upon us”.

- **Ճաշու Աւետարանի ընթերցումէն առաջ երգել**

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ

**Որ յարեար ի մեռելոց ողորմեա մեզ:
«Յարուժեան Կիրակիներուն»**

- **Նախընտրաբար ըստ Տօնացոյցի Կիրակի օրուան Ճաշու Աւետարանի ընթերցումը կատարել եւ համապատասխան բացատրութիւններ տալ: [15 վայրկեան]**

- **Անդրադառնալ կրօնական-ազգային տօներուն [5 վայրկեան]**

Այս Կիրակի խօսիլ «Յիսուս փոքրիկներու բարեկամը» նիւթին շուրջ:

- **Թելադրութիւններ եւ ծանուցում-յայտարարութիւններ [5 վայրկեան]**
- **Կամաւոր նուէրներու հաւաք**
- **Կիրակնօրեայի քայլերգ**
- **Դասարանային աշխատանք**
- **Փակման Աղօթք**

«Ճաշակեսցուք խաղաղութեամբ ըզկերակուրս որ պատրաստեալ է մեզի Տեառնէ, օրհնեալ է, Տէր ի պարգեւս իւր, ամէն»:

For Purification, Pentecost and Assumption: “Who did come and are to come, have mercy upon us”.

For Feasts of the Cross, of the Church, saints and Fasting days: “Who was crucified for us, have mercy upon us”.

- **It is preferred to read the Gospel of the day. The teacher should explain/ comment what was read [15 minutes].**

On this Sunday it is appropriate to speak about “Jesus: friend of the children”. [5 minutes].

- **Announcements/ recommendations/ suggestions**
- **Collection**
- **Sunday School’s anthem**
- **Students depart to their classes.**
- **Closing Prayer**

“Let us peacefully eat this meal which the Lord provides for us. Blessed is the Lord in all His gifts. Amen”.